Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի
համայնքի ավագանու
2020թ. դեկտեմբերի 29-ի N77- Ն որոշման

ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ 2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողային ֆոնդի հողամասերի 2021 թվականին օտարման մեկնարկային գինը 1քմ-ի համար սահմանել ոչ պակաս հողամասի կադաստրային արժեքից:

2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերից Մեղրի և Ագարակ քաղաքներում 2021 թվականին կառուցապատման իրավունքով տրամադրելու համար տարեկան վարձավճարների չափեր սահմանել՝

1)առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասերի 1 ք.մ-ի համար՝ 1000 (մեկ հազար) դրամ, բացառությամբ ընդերքօգտագործման իրավունքով օգտագործվող հողամասերի, որի համար սահմանել 1 հա-ի համար՝ մեկնարկային գին 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) դրամ.

2)մրցութային կարգով կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասերի 1ք.մ-ի համար՝ մեկնարկային գին 900 (ինը հարյուր) դրամ.

3)ավտոտնակների կառուցման համար կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասերի 1 ք.մ.-ի համար՝ մեկնարկային գին 100 (մեկ հարյուր) դրամ:

3.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերից Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի գյուղական բնակավայրերում 2021 թվականին կառուցապատման իրավունքով տրամադրելու համար տարեկան վարձավճարների չափեր սահմանել՝

1)առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասերի 1ք.մ.-ի համար՝ ոչ պակաս հողի հարկին հավասարեցված տարեկան դրույքաչափից.

2)մրցութային կարգով կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասերի 1 ք.մ.-ի համար՝ ոչ պակաս հողի հարկին հավասարեցված տարեկան դրույքաչափից:

4.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողային ֆոնդի հողամասերի 2021 թվականին օգտագործման (վարձակալության) տրամադրման մեկնարկային գինը 1քմ-ի համար սահմանել ոչ պակաս հողի հարկին հավասարեցված տարեկան դրույքաչափից:

5.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողային ֆոնդի հողամասերից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն իրականացնելու համար հողամասերի տրամադրման 1 հեկտարի վարձավճարի տարեկան չափ սահմանել՝ մինչև 10 հեկտարի համար 20000 (քսան հազար) դրամ, 10-50 հեկտարի համար 10000 (տաս հազար) դրամ, 50 հեկտարից ավելիի համար 5000 (հինգ հազար) դրամ, այլ հետախուզական-հետազոտական աշխատանքներ իրականացնելու համար՝ 1 հեկտարի համար տարեկան 5000 (հինգ հազար) դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ